

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 5-ին ժամը 15⁰⁰-ին կայացած նիստի

Արձանագրություն N 6

ՕՐԱԿԱՐԳ

1. Մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների հաշվետվությունը հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն ինտեգրելուն ուղղված՝ 2009թ. ընթացքում կատարած աշխատանքների մասին:
2. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի 2010 թվականի աշխատանքային ծրագրի քննարկումը:
3. Հաշմանդամների հիմնախնդիրներին վերաբերվող ինտերնետային կայքի ստեղծման մասին:
4. ՀՀ Կառավարության 2009թ. օգոստոսի 13-ի թիվ 995-Ն "Հայաստանի Հանրապետության և Երևան քաղաքի ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային ռազմավարությունը և հինգ տարվա գործողությունների ծրագրերը հաստատելու մասին" որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ

Մխիթար Մնացականյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նախագահ

Հանձնաժողովի անդամները՝

Ջենմա Բաղդասարյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի

- | | | |
|------------------|---|---|
| Գ. Մալխասյան | - | տեղակալի |
| Վ. Տերտերյան | - | ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ |
| Մ.Մկրտչյան | - | ՀՀ կրթության եւ գիտության նախարարի տեղակալ |
| Տ. Հարությունյան | - | ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ |

- Հ. Աբրահամյան - Հայաստանի հաշմանդամների "Փյունիկ" միության նախագահ (համաձայնությամբ)
- Ա. Ալավերդյան "Ունիսոն" - "Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)
- Ս. Թադևոսյան - "Հույսի կամուրջ" հաշմանդամ երեխաների եւ երիտասարդների իրավունքների պաշտպանություն" հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)
- Ա. Հակոբյան - "Հայաստանի կույրերի միավորում" հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)
- Ա. Մկրտչյան - "Սկարպ" առողջական կենտրոն" հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)
- Լ. Ներսիսյան "ասոցիացիա" - "Աստղիկ" հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)
- Ս. Օհանյան - "Հաշմանդամների "Փարոս" կրթության եւ մշակույթի կազմակերպության կարգազման կենտրոն" հասարակական նախագահ (համաձայնությամբ)
- Ա. Կեսոյան - ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հացերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների եւ տարեցների հիմնահարցերի վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամների առաջարկությամբ նիստին մասնակցել են`

- Ժ. Ասատրյան - ՀՀ ֆինանսների նախարարության բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետ` նախարարի առաջին տեղակալ Պ.Մաֆարյանի առաջարկով
- Ց. Խաչատրյան - ՀՀ տարածքային կառավարման նախարարության տարածքային կառավարման վարչության վերահսկողության բաժնի պետ` նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի առաջարկով

Հրավիրվածներ`

Մեսրոպ Հարությունյան՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
ճարտարապետության և քաղաքաշինության
վարչության

պետի տեղակալ
Հրանտ Պետրոսյան՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության
աշխատակազմի
ճարտարապետության քաղաքականության և հատուկ
կարգավորման օբյեկտների համակարգման
վարչության

ճարտարապետության քաղաքականության բաժնի
գլխավոր մասնագետ
Ռազմիկ Օհանյան - ՀՀ քաղաքաշինության նախարարության
աշխատակազմի
ճարտարապետության բաժնի պետ

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային և
Երևան /քաղաքի/ հանձնաժողովների ներկայացուցիչներ՝

- Ռուզաննա Զաքարյան - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
սոցիալական ապահովության վարչության պետ
/հանձնաժողովի քարտուղար/
Աշոտ Մուրադյան - Արարատի մարզպետի տեղակալ
/մարզային հանձնաժողով/
Գեղամ Միրզոյան - Արարատի մարզպետարանի առողջապահության և
սոցիալական ապահովության վարչության
սոցիալական
ապահովության բաժնի պետ
/մարզային հանձնաժողով /
Լարիսա Մուրադյան - Արմավիրի մարզպետի տեղակալ
/մարզային հանձնաժողովի քարտուղար/
Արտուշ Ղուկասյան - Գեղարքունիքի մարզպետի տեղակալ
/մարզային հանձնաժողովի նախագահ/
Արսեն Դարբինյան - Լոռու մարզպետի տեղակալ
/մարզային հանձնաժողով/
Հարություն Արշակյան - Շիրակի մարզպետի տեղակալ
/մարզային հանձնաժողով/
Սամվել Ղազարյան - Շիրակի մարզպետարանի առողջապահության և
սոցիալական ապահովության վարչության պետ
/մարզային հանձնաժողով/
Արա Դոլունց - Սյունիքի մարզպետի տեղակալ

- Մելս Հարությունյան - /մարգային հանձնաժողովի նախագահ/
 Վայոց Ձորի մարզպետի տեղակալ
 /մարգային հանձնաժողովի նախագահ/
 Կարինե Դովլաթբեկյան – Տավուշի մարզպետարանի առողջապահության և
 սոցիալական ապահովության վարչության պետ
 /մարգային հանձնաժողովի քարտուղար/
 Լևոն Միքայելյան - Կոտայքի մարզպետի տեղակալ
 /մարգային հանձնաժողով /
 Վանիկ Հունանյան - Կոտայքի մարզպետարանի առողջապահության և
 սոցիալական ապահովության վարչության
 սոցիալական
 ապահովության բաժնի պետ
 /մարգային հանձնաժողովի քարտուղար/
 Անդրանիկ Մելոյան - Արագածոտնի մարզպետի տեղակալ
 /մարգային հանձնաժողով /
 Գայանե Դանիելյան - Արագածոտնի մարզպետարանի երեխաների
 իրավունքների պաշտպանության վարչության
 պետ
 /մարգային հանձնաժողովի քարտուղար/

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
 աշխատակազմ

- Անուշ Սիմոնյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
 նախարարության բժշկասոցիալական
 փորձաքննության
 գործակալության պետի տեղակալ
 Հասմիկ Խաչատրյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
 նախարարության աշխատակազմի
 հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
 Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչություն

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային
 հանձնաժողովի հերթական նիստը նախագահում էր ՀՀ աշխատանքի և
 սոցիալական հարցերի նախարար՝ հանձնաժողովի նախագահ
 Մ. Մնացականյանը:

Ողջունելով հանձնաժողովի անդամներին՝ նախարարը կարևորեց
 Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային
 հանձնաժողովի և պետական կառավարման մարմինների, հասարակական
 կազմակերպությունների համատեղ համակարգված աշխատանքը

հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն ներառելու, նրանց համար հավասար հնարավորություններ ապահովելու, սոցիալական պաշտպանության իրականացնելու գործում: Պարոն Մնացականյանը նիստի սկզբում ներկայացրեց, որ “Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին” ՄԱԿ-ի Կոնվենցիան ներկայացվել է ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը:

Նախարարի առաջարկությամբ հաստատվեց նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ լսեցին` Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային և Երևան /քաղաքի/ հանձնաժողովների նախագահներին և ներկայացուցներին:

Մարզային հանձնաժողովների նախագահները և Երևան /քաղաքի/ հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեցին հաշվետվություն հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն ինտեգրելուն ուղղված` 2009թ. ընթացքում կատարած աշխատանքների մասին: /հաշվետվությունները կցվում է/:

Մարզային հանձնաժողովները նշեցին, որ հանձնաժողովների ստեղծումը մեծապես նպաստել է համայնքներում հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծմանը: Մեծ ձեռք բերումներ են արձանագրվել վերականգնողական և ցերեկային խնամքի կենտրոնների ստեղծման, հաշմանդամների նկատմամբ վերաբերմունքի փոփոխության հարցերում: Ակտիվացել է համագործակցությունը ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների հետ, որի արդյունքում կազմակերպվել է բազմաթիվ միջոցառումներ: Այս ամենի հետ մեկտեղ կան նաև շատ չլուծված հարցեր, մասնավորապես շրջակա միջավայրի հարմարեցման և հաշմանդամների զբաղվածության հարցերում:

Լոռու մարզպետի տեղակալ պարոն Դարբինյանի կողմից առաջարկություն արվեց, որպեսզի մարզում ապրող հաշմանդամություն ունեցող անձանց համար պրոթեզաօրթոպեդիկ պարագաների« վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների տրամադրումը կատարվի մարզերում:

Արտահայտվեցին`

Արմեն Ալավերդյանը` “Ունիսոն” հասարակական կազմակերպության նախագահ,

Սուրեն Օհանյանը` “Հաշմանդամների “Փարոս” կրթության և մշակույթի զարգացման կենտրոնի հասարակական կազմակերպության նախագահ:

Օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ջ. Բաղդասարյանը:

Տիկ. Ջ.Բաղդասարյանը ներկայացրեց Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի 2010թ. աշխատանքային ծրագիրը:

Որոշեցին`

- հաստատել Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի 2010թ. աշխատանքային ծրագիրը:

- ներկայացնել առաջարկություններ 10-օրյա ժամկետում ինտերնետային կայքի ստեղծման վերաբերյալ:

- հարցման կարգով ներկայացնել առաջարկություններ ՀՀ Կառավարության 2009թ. օգոստոսի 13-ի թիվ 995-Ն “Հայաստանի Հանրապետության և Երևան քաղաքի ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային ռազմավարությունը և հինգ տարվա գործողությունների ծրագրերը հաստատելու մասին” որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

Նիստի ավարտին պարոն Մնացականյանը շնորհակալություն հայտնեց բոլոր ներկաներին: Այնուհետև հանձնաժողովի անդամների և հրավիրվածների ուշադրությունը հրավիրեց երկու հարցի վրա`


1. Հետևողական լինել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման գործընթացին, որը հանդիսանում ՀՀ Կառավարության և նախարարության կարևորագույն խնդիրներից մեկը:

2. Պարոն Մնացականյանը ներկայացրեց, որը Հայրենական մեծ պատերազմի 65-ամյակի կապակցությամբ ՀՀ Կառավարությունը միջոցառումներ է նախատեսել, ուստի դիմելով հրավիրվածներին` հատկապես մարզպետարանների ներկայացուցիչներին լրացուցիչ օժանդակություն ցուցաբերել Հայրենական մեծ պատերազմի վետերաններին:

Որոշվեց`

ի գիտություն ընդունել նիստում արված առաջարկությունները և 2010թ. ավելի հետևողական լինել հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն ներառելու, նրանց համար հավասար հնարավորություններ ապահովելու, սոցիալական պաշտպանություն իրականացնելու գործում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար,
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով
զբաղվող ազգային հանձնաժողովի նախագահ`



Մ. Մնացականյան

Հանձնաժողովի քարտուղար`



Ա. Կեսոյան

